Բայց այստեղ ևս առաջնորդվելով մեր ընդհանուր սկզբունքով, վոչ մի ուղղում չենք մտցրել աղբյուրի մեջ, նամանավանդ, վոր № 70 աղբյուրն ապակետիպով և հրատարակված և Կենսավիճվարի գյուղաբաժինը բարձրությունների չափերում սպրտված թերությունների մասին և վոչ մի խոսք չի ասել։

4. Բնակավայրի տիպը.—Տվյալ բնակավայրը գյուղ է թե գյուղակ, ձմեռանոց է թե տոնիկ ճշտորոշելու համար, վորպես որիցնախը հատկացրել ենք հատուկ սյունակ՝ «բնակավայրի տիպը», ոգտվելով գլխավորաբար 1926 թվի մարդահամարի տվյալներից\*)։

Նախապես բնակված, բայց ներկայումս անմարդաբնակ բնակավայրերի վերաբերմամբ նման տվյալներ վերցրել ենք համապատասխան աղբյուրներից, վորոնցից վոր ոգտվել ենք տվյալ թվականի բնակչության ցուցակները կազմելիս։ Առանձնապես մենք ոգտվաբացանք ուսերին ОТСЕЛЬОК և ВИСЕЛОК հասկացողությունները թարգմանել, ուստի և ամեն տեղ զրանց նշանակել ենք գյուղակ տերմինով։ Պետք է նշել, վոր բնակավայրերի տիպի մասին վերջնական որենսդրական ճշտումներ կատարված չլինելու պատճառով հավանական է, վոր առանձին շփոթություններ տեղի ունեցած լինեն։

5. Գյուղխորհուրդը.—Մեր ցուցակ աղյուսակներում բնակավայրերը դասավորված են ըստ ալբերնական կարգի շրջանի ներսում, ավերորդ համարելով դասավորումը նաև գյուղխորհրդի ներսում, վերջիններիս անընդհատ փոփոխականություն հետևանքով։ Սակայն ուսումնասիրողին հնարավորություն տալու համար ամեն մի գյուղի դիմաց № 1 ցուցակ աղյուսակում նշանակել ենք նաև, վոր գյուղխորհրդին պատ-

\*) № 56 աղբյուրը։

կանելը, համաձայն Կենսագործկոմում 1933 թ. չեղած տվյալների։ Հին բնակավայրերը, ձմեռանոցները և մանր բնակավայրերն ըստ գյուղխորհուրդների դասավորված չեն մեր կողմից։

6. Մշտանների սարածախյուրը.—Աղյուսակ № 3-ում մեջ են բերված շրջանների տարածություններն առ 1-ն սեպտեմբերի 1933 թ.

### ԸՆԳՐՎԱԾ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

Աշխարհագրից և մարդահամարներից մենք մեր ցուցակ-աղյուսակներում տեղ ենք տվել հետևյալներին՝

#### Ա. ՄԵՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒՅՈՒՆԵՐ

1. 1830-ական թվականները, վոչ միայն վորպես հարյուրամյակի սկիզբը, այլև վորպես համառուսական 8-րդ աշխարհագիրին\*) զուգադիպող շրջան, վորն և կազմում է Անդրկովկասի համար առաջին լրիվ հաշվառումը, աննշան բացառություններով և թերություններով։

2. 1873 թվականի աշխարհագիրը՝ վորպես 1876 թվի ուս-թրքական պատերազմին նախորդող շրջան։ Այդ ուղղությունը ցանկալի լեռ ունենալ նաև 1856 թվի պատերազմին նախորդող շրջանը, բայց մեր տրամադրությունն սակ կային միմիայն 1849—50 թվականներում կատարված աշխարհագրի տվյալները, այն և վոչ լրիվ—միայն 7—8 հատոր։

3. 1886 թվականը պատկերացում է 1876 թվի պատերազմին հաջորդող շրջանը։ Այդ թվականի տվյալներն՝ իրենց լրիվությամբ, մեթոդիկալի ճիշտ պահպանման դեմով, պետք է համարել Անդրկովկասի միակ աշխարհագիրը ամբողջ հարյուրամյակում նախախորհրդային շրջանի վերաբերմամբ։ 1886 թիվը ոգտագործում ենք նաև 1897 թվի գյուղ առ գյուղ, ըստ կրոնների քաղված տվյալները ըստ ազգությունների դասավորելու գործում։

4. 1908 և 1914 թվականներին աշխարհագիրներ չեն կատարվել, բայց 1914 թիվը, վորպես նախապատերազմական շրջան, ընդգրկելը շատ կարևոր և անհրաժեշտ էր։ Այդ թիվին

\*) Համառուսական աշխարհագիրը (pebusu) կատարվել են 10 հատ և հետևյալ թվականներին՝ 1719, 1743, 1761, 1781, 1794, 1811, 1815, 1833, 1850 և վերջինը 1866 թվին։ Ամեն մի բեվիզլայի կատարումը տեղի է հաճախ տասնյակ տարիներ։

տվյալներով, ոգտագործելով այդ առթիվ Հողօդկամատի հողբաժնի պաշտոնական տրվյալները, ստացված Կենսագործկոմի միջոցով։

Այս այն տեղեկատու հարցերը, վոր ավելացրել ենք մեր այս աշխատությունում մեջ ավելի բազմապիսի գործածություն համար հնարավորություններ ստեղծելու մտքով։

Լրացնելու համար մենք ոգտվում ենք վարչական ապարատների միջոցով հավաքված տեղեկություններից և իրար լուսաբանելու համար մեջ ենք բերում լեռնա աղբյուրներ՝ 1908, 1914ա և 1914բ։

5. 1916 թվին կատարվել է համառուսական գյուղատնտեսական վիճակագրություն, վորի տվյալները վոչ միայն պատկերացում են պատերազմի նախնական շրջանը, այլև ոժանդակում են պարզաբանելու նախապատերազմյան շրջանը (1914 թ.), ինչպես նաև բնակչության ամսան մեջ տեղի ունեցող անկման առաջին նշանները։

6. 1919 թվականը բնորոշում է Դաշնակցություն տիրապետությունը և բնակչության արագընթաց նվազումը։

7. 1922 թվականը ցույց է տալիս բնակչության նվազման հետագա դադարումը և խորհրդային իշխանության առաջին որերը։

8. 1931 թվականը կազմում է հարյուրամյակի վերջը և, համարելով 1831 թվի հետ, տալիս է բնակչության հարյուրամյա ամսան պատկերը։

#### Բ Առկա բնակչությունը

Ցարական իշխանության որով կատարվել է միայն մեկ մարդահամար 1897 թվին, իսկ խորհրդային շրջանում՝ յերկուսը, 1920 և 1926 թվին։ 1920 թվին Հայաստանը գեռևս խորհրդայնացված չլինելով, այդ թվականի մարդահամարը ՀՍՍՀ-ին չի կարողացել ընդգրկել։ Ուստի մենք մեր ցուցակ-աղյուսակներում մեջ ենք բերում՝

9. 1897 թիվը վորպես առաջին մարդահամարի արդյունքները և

10. 1926 թիվը, վորպես ՀՍՍՀ-ի առաջին մարդահամարի արդյունքներն, և վորը տալիս է նույնպես յեռեսունամյա ամսան պատկերը։



**ՀԱՐՑՈՒՐԱՅԱԿԻ ՍԿԻՋԲԸ -- 1830-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ**

Անդրկովկասը ուսաների կողմից գրավվեց մաս առ մաս:

1801 թվին, հունվարի 18 ի մանիֆեստով տեղի ունեցավ Վրաստանի իրավական միացումը Ռուսաստանին: Այդ ժամանակ Վրաստանի մասն էլին կազմում հետեյալ գավառները 1. Կարթլիսիա, 2. Շամշատի (որտ մի մասը ներկայի Շամշադինի շրջանն է), 3. Փամբակ և Շորագյալ (ներկայիս Ստեփանավանի, Ղարաքիլիսայի, Համամլուի, Ղզլուչի, Լենի-նականի շրջաններն ամբողջությամբ բացի մի քանի գյուղերից, իսկ Արթիկն ու Արարանը կիսով չավել), 4. Սոմխեթյա (սրա մեջ եր մտնում ներկա Ալլահվերդու շրջանի մի մասը), 5. Ղազախ (սրա մեջ եր մտնում նաև ներկա Իջևանի ու Դիլիջանի շրջաններն ու Ալլահվերդուն անցած մի քանի գյուղերը), 6. Խելսուրյա, 7. Փշավյա, 8. Թուրյա:

1803 թվին գրավվեց Գլանջայի խանությունը:

1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի դաշնագրով Պարսկաստանից Ռուսաստանին անցան հետեյալ խանությունները՝ Շեքի, Շիրվան, Ղարաբաղ (վորի մասն եր կազմում նաև ներկայի Զանգեզուրի գավառն ու Մեղրիի շրջանը), Թալիշ, Բազու, Կուրա, Դերբենտ:

1813 թ. տեղի ունեցավ նաև Իմերեթիայի, Գուրիայի և Աբխազիայի միացումը:

1828 թ. փետրվարի 10-ին թուրքմենչալի դաշնագրով Պարսկաստանի հետ՝ Ռուսաստանին միացվեցին Յերևանի\* և Նախիջևանի խանությունները և Որդուբադի սկրուզը:

1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսի դաշնագրով միացվեցին Ախալցխայի Փաշալըզը, իսկ հաջորդ տարին նաև Զիրքեյաքանի շրջանը:

Ներկա Անդրկովկասի մասը մագմոյ ՂԷՐ ջանների Ռուսաստանին իրավականորեն միացնելն ուրեմն տեղի յի ունեցել չերեսուն տարիները ընթացքում, սկսած 1801-ից (Վրաստանի միացման իրավական ձեւակերպումը) և ավարտված 1829-ին, բացառությամբ Ադրբայի և Բաթումի շրջանների, վորոնք միացվել են 1878 թվին:

\*) Յերևան քաղաքը գրավվեց 1827 թ. հոկտեմբերի 1-ին:

Ռուսական միապետությունը իր նորագրավ յերկրներին ծանոթանալու համար կատարեց ամբողջական և համատարած աշխարհագիր, վորի մեջ մտան ներկա Անդրկովկասի մինչ այդ ժամանակ Ռուսաստանին միացած մասերը\*):

1827 թվի ապրիլին ֆինանսների մինիստրը ներկայացնում է աշխարհագրի ծրագիրը, վորը հաստատվում է ապրիլի 7-ին, 1828 թվին ձեռնարկվեց աշխարհագրի կատարման, իսկ 1834 թվին ավարտվեց 1835 թվի սկզբին զեկուցվում է արդուքների մասին և տվյալների հրատարակումը հաստատվում է 1835 թվի փետրվարի 19-ին:

Յինդուրան թույլատրում է նրա հրատարակությունը 1836 թ. մարտի 1-ին և նույն թվին էլ լույս է տեսնում 4 հատորով (Оборзрение Россійских владении за Кавказом\*):

Ըստ այդ հրատարակության տվյալները 1830-ական թվականները աշխարհագիրը տեղի յի ունեցել հետեյալ թվականներին՝

- 1829 թ. Փամբակ--Շորագյալում.
- 1831 թ. Շամշադիում (—դին).
- 1832 թ. Բորչալու, Ղարաբաղ, Նախիջևանում.
- 1833 թ. Գլանջալում.
- 1834 թ. Յերևանի պրովինցիայում և Յերևան քաղաքում:

Սակայն այս ցուցմունքները հակասում են Հայկական Մարզի աշխարհագիրների ղեկավար Շոպենի ցուցմունքներին: Վերջինս ցույց է տալիս, վոր աշխարհագիրը սկսվել է Հայկական Մարզում 1829 թ. ապրիլին և ավարտվել է 1832 թ. մայիսին, տեղով 3 տարի: Մի շարք շրջաններ այդ յերեք տարվա ընթացքում նորից են գրվել, վորովհետև ժամատախտ, խոլի-րան, ինչպես նաև ուսս թուրքական պատերազմը խանդարել են և այդ պատճառով տեղի

\*) 1817 թվի աշխարհագիրը, վոր քան մեկ հայտնի է ընդդրվել է մլմլայն Վրաստանի մասին, իսկ 1825 թվին Ղարաբաղը և այն էլ մեծ թեկ ու թյուններով:

\*\*) Ուրեմն սկսելուց մինչ տպագրության ավարտումը տեսնում է 7 տարի կատարումը և 2 տարի, հրատարակումը հետեյալ մտղահամարներից 1897 թվից հրատարակվել է 8 տարի հետո, 1926 թ. տվյալները առաջին մասը 1929 թ., 2-րդ 1930 թ.:

չեն ունեցել մասսայական տեղափոխություններ, իսկ ինքը Շոպենը հաճախ իր գործով զբաղվելու փոխարեն ստիպված է լիել պատերազմական գործողությունների մասնակցել\*):

Պետարխիվում լեղած Յերևանի պրովինցիային վերաբերող աշխարհագրի բոլոր մատյանների շապկի վրա ցույց է տրված 1831 թ. բացի Յերևան քաղաքի մի մասի, վոր ցույց է տրված 1832 թ.

Աշխարհագրի թվականի ճշտմանը վերաբերող այդ յերեք տարբեր վկայությունները կարելի չէ դասավորել հետեյալ ձևով՝

- 1. ՀՄՊՀ-ի հյուսիսային շրջանները ցուցակագրվել են 1829 թվին.
- 2. Յերևանի պրովինցիայի մասը կազմող շրջանները, քիչ բացառությամբ 1831 թվին.
- 3. Արևելյան շրջանները 1832-1833 թվին:

Մեր աշխատության մեջ պայմանականորեն ամեն տեղ ոգտագործում ենք 1831 թվականը, վորպես աշխարհագիրի կատարման ամենածավալուն շրջանը, չմոռանալով վոր աշխարհագիրը սկսվել է 1829 թվին և տեղի է մինչև 1834 թ.: Բնակչության աճման խնդրի դիտական վերլուծման ժամանակ այդ 5 տարիները խոշոր դեր կարող են ունենալ մասնավորապես մեխանիկական աճման հարցում (Պարսկաստա-

նից և Թյուրքիայից յեկած գաղթականությունը և նրա դեռ վերջնականորեն տեղափոխված չլինելը), վորովհետև բնակչության շարժուն վիճակը կարող է պատճառ դառնալ մի տեղ կրկնակի հաշվառման, իսկ մի այլ տեղ՝ վրիպումների:

Հայկական Մարզի տվյալները վերցրել ենք այդ մարզի ֆինանսների մասի վարիչ և աշխարհագիրի ղեկավար Շոպենի «Армянская область աղգեմիական մրցանակի արժանացած տպագիր մեծ աշխատությունից, առանց խորասուզվելու նրա «աշխարհագիրի նյութեր»-ի բաղմահատոր ձեռագրում, վորովհետև լեթե մի քանի հոգու տարբերություններ էլ հայտարարվելու լինեն, նրանք չերեք չեն կարող ազդել բնակչության ընդհանուր քանակի վրա\*\*):

Հայկական Մարզից դուրս լեղած յերկրամասերի համար ոգտվել ենք Յերևանի և Թիֆլիսի պետարխիվում լեղած ձեռագիր հատորներից:

Սակայն, հակառակ մեր հետապնդումների, մեզ չհաջողվեց ձեռքի տակ ունենալ 1830-ական թվականների աշխարհագրի բոլոր մատյանները:

Հայկական Մարզից դուրս յեղած շրջանների համար մենք ոգտագործել ենք հետեյալ թվականների տվյալները՝

Վարչական բաժանումը	Ներկա վոր շրջանները	Թվական	Դիտողություններ պրոյուրի մասին
1. Փամբակի դիստանցիան	Ղարաքիլիսա, Ստեփանավան մասամբ նաև Լենինական (Համամլուլի յենթաշրջան)	1842	Ուներ միայն արական սեռը թե հայերը և թե թաթարները:
2. Ղ ա զ ա խ	Դիլիջան, Իջևան, Ալլահվերդի Բարանայի յենթաշրջանը	1830	Հայերը յերկու սեռը միասին. թաթարները միայն արական սեռ:
3. Շ ա մ շ ա գ ի լ	Շամշադին	1831	Նույնը:
4. Ղարաբաղի պրովինցիայի մի մասը	Սիսիան, Գորիս, Ղափան և Մեղրի	1832	Նույնը:
5. Մեղրի-Գլուսեյի մասալը	Մեղրի, Սիսիան, Ղափան (գլխավ. արևմտյան մասերը)	1842	Նույնը:

\*) № 80 էջ II—III:  
\*\*) Ձեռագիր մատյաններում 8 մտանների վերաբերմամբ կային գեոս մատյանից չսովորած ամփոփման աղուսակներ, վորոնք նույնությամբ գուզաղիցում են Շոպենի գրքի 543-634 էջերում տեղափոխված աղյու-

սակները, բացառությամբ № 74 Ախուրդ Բզովանդ գյուղից, վորը ձեռագրում ուներ 136 բնակչի, իսկ տպագրում՝ 137 բնակչի: Բնակչության թվերի ավելի մանրամասն ստուգում կատարված է ընտրով մեթոդով և տվյալները գուզաղիցվել յեն տպագրված տվյալներին:

Վարչական բաժանումը	Ներկա վոր շրջանները	Թվական	Դիտողություններ մասին	աղբյուրի
6. Զանգեզուրի մահալը	Մեղրի, Սիսիան, Գորիս, Դափան (գլխավ. արևելյան մասերը)	1842	Նույնը:	
7. Շորագյալ	Արթիկի, Լենինականի, Աղբաբայի, Աբարանի շրջանները	1842	Նույնը:	
8. Ալեքսանդրապոլ քաղաք Լենինական		1829	Միայն արական սեռ:	

«1842 թվական» անունը կրող ձեռագիրները կոչվում են «Проверка Камерального описания», ուրեմն առանձին աշխարհագիր չեն: Այդ ստուգումները կատարված են 1842 թվից առաջ, իսկ հետագայում հատոր առ հատոր կազմված են հավանաբար 1842 թվին: Այդ վերջին միտքը ապացուցվում է նաև նրանով, վոր Լենինական քաղաքի Բ. աշխարհագրի չեղհատոր ձեռագրերի կողքի վրա, ինչպես վերհիշված ձեռագրերին, գրված է «1842 թիվ», բայց ներսում գրված է «Камеральное описание 1839 года»:

Նկատի ունենալով վոր՝  
 ա. 1830-ական թվականներին աշխարհագրի ժամանակ բաց թողումները անխուսափելի եին, ցուցակներում առանձին ընտանիքների և անձերի դիմաց աշխարհագրի հետ համեմատած կան նշումներ «пропущено»:

բ. Կա փոքրահասակների ակնբախ թերհաշվառումը 1842 թվին\*):  
 գ. Աշխարհագրի մեջ չեյին մտնում արտոնյալ դասակարգերը (ազնվական, հոգևորական և այլն) և վոչ էլ վոչ պետական հողերի վրա բնակվողները:

դ. Հնարավորություն կար նորեկ բնակիչներին բնակչության թվից դուրս հանելու: 1842 թվին նրանք ամեն մի գյուղի բնակչության վերջում գրված են առանձին յենթավերնագրի տակ:

ե. 1830-ական թվականի աշխարհագրից հետո սեղի յեն ունեցել արտագաղթումներ:

\*) Վորովհետև Շորագյալի գյուղերի բնակիչները դուրսնեքը չեյին արված, ասկաված եմ յեղել յես անձամբ շունչ առ շունչ հաշվել: Ինձ չափազանց կասկածելի թվում է հաշվելու միջոցին—փոքրահասակների փոքր բանակը, Տասնյակ ընտանիքների շարքում հազիվ 1—2-ում հանդիպում եյի 1—5 տարեկան փոքրիկները, իսկ «0» տարեկան վոչ մի հատ, յերեկ հաշվել են մի տարեկանների հետ, կամ պարզապես յեղել և թերհաշվառում:

Շատ ընտանիքների դիմաց հետագայում նշված է նրանց հեռանալու թվականը աշխարհագրից հետո (1830—40 թ.) «уехал» «бежал в Турцию» և այլ նշումներով\*):

Մենք համարձակու թյուն ունեցանք «1842 թվականի» ավյալները, նախապես նորեկ բնակիչներին հանելուց հետո, համազոր հաշվել աշխարհագրի ավյալներին: Այդպիսով վիճակագրական հավասարակշռութուն պահպանելու համար 1830-ական թվերից մինչև 1840-ական թվականների բնական աճի և մեխանիկական նվազման մի մասի դիմաց համազոր ենք ընդունել չցուցակագրված ընտանիքները, արտոնյալ դասակարգերն վոչ պետական հողերի վրա բնակվող գյուղացիներն ու ընտանիքով հեռացածները:

Թե 1842 թվականին վորքան նորեկ բնակչություն չենք մենք դուրս թողել և վոր շրջանները, մեջ ենք բերում գյուղ առ գյուղ ավյալները:

Ա. Շորագյալ

1. Դահարլի	67 հայ	
2. Բալանդուր	104 »	և 17 հուլ
3. Դափլի	76 »	
4. Քեյալի	54 »	
5. Տավջանդլաղ	67 »	
6. Դաղարապատ	130 »	
7. Սվանվերդի	43 »	
8. Աղին	79 »	3 հուլ
9. Դեղած	5 »	

\*) Որինակ ըստ № 81 աղբյուրի 1831—32 թվի ձմրան Մալխայից Շորագյալ են փոխադրվել 182 անտեսութուն 674 արական բնակչությամբ: 1842 թվին մատյաններում հավանաբար սրանք նշանակված լինեն նորեկները խլամբում, իսկ Մալխայի շրջանի աշխարհագրի ժամանակը մոտավորապես 1832 թ. դուրս մնացած լինեն հիմնական աշխարհագրից:

10. Զրիլի	27 հայ	
11. Դղլբիլիսա	96 »	
12. Բողղալա	38 »	
13. Հոռոմ	275 հայ	11 իսլամ
14. Սոնկյուուլի	55 »	
15. Սարիբաշ	211 »	
16. Արմուտլի	8 »	
17. Մահմուդլուղ	130 »	
18. Դիչաղ	79 »	
19. Բաշգյուղ	86 »	
20. Փոքր Արլիվալի	85 »	
21. Մեծ Արլիվալի	66 »	
22. Դուլիջան	101 հայ	14 իսլամ
23. Դասավի	15 »	
24. Փոքր Պարնի	39 »	
25. Քաֆթալի	39 »	
26. Մաշրիլի	13 »	
27. Դուլիլի ղըլաղ	10 »	
28. Իմրիան	6 »	
29. Սոգյուլթիլի	161 »	
30. Զրախիլի	62 »	
31. Փոքր Քյափանակ	59 »	
32. Զորլի	66 »	
33. Փալուզլի	4 »	
34. Ճղիլար	4 »	
35. Մեծ Դանլիջա	29 »	
36. Մեծ Արթիկ	40 »	
37. Մեծ Դուղբենդ	63 »	
38. Դիրաբլար	24 »	

Հայ 2329  
 Իսլամ 25  
 Հուլյն 20

Ընդամենը 2374

Բնիկներ Շորագյալի ուչաստկայում շատ աննշան ելին, նրանք բնակվում ելին 25 գյուղերում և կազմում ելին 496 տուն և 3019 շունչ: Իսկ մնացյալ գյուղերը, ինչպես նաև այդ 25 գյուղերում չեկել բնակվել ելին տաճկահայ գաղթականները մինչ 1830-ական թվականներին աշխարհագրից, վորից հետո չեկածներին 2374 անձ մենք դուրս ենք թողել:

Բ. Փամբակ

արական շունչ	հայ
1. Դարաբուլա	14 հայ
2. Դալթաղլի	31 »
3. Արվիբեկ	11 »

արական շունչ

4. Մեծպարնի	50 հայ
5. Դարալ	22 »
6. Նալբանդ	17 »
7. Դղլորան	9 իսլամ
8. Գյուլլուջա	5 հայ
9. Գյոգորան	10 հայ 2 իսլամ
10. Համամլի	46 »
11. Վորդնավ	25 »
12. Դաչաղան	17 »
13. Դուրասլի	7 իսլամ
14. Սարալ	13 »
15. Հաջիդարա	6 »
16. Հալդարլի	3 »
17. Հալլավար	3 »
18. Արջուտ	5 »
19. Խանջուղաղ	8 »
20. Գարբաղ	2 »
21. Դըլաղ	3 հայ
22. Դարաբիլիսա	13 »
23. Վարդանլի	8 »
24. Համգաչիման	16 »
25. Շահալի	15 »
26. Կուրթան	17 »
27. Վարդաբլուր	18 »
28. Հորարձի	1 »
29. Հովանդարա	12 »
30. Գյուլագարակ	4 »
31. Գյառգյառ	20 »
32. Ստեփանավան	1 »
33. Ագարակ	»
* 34. Լիջան	72 »
* 35. Ուուուտ	48 »
36. Սարչապետ	85 »
* 37. Շիշթափա	46 »
* 38. Փ. Դարաբիլիսա	33 »
* 39. Սովուղբուղ	35 »
40. Մեծ Դարաբիլիսա	3 »
* 41. Նիկիտինո	111 ուու

Հայ 701  
 Իսլամ 58  
 Թուս 111

Ընդամենը 870

Աստղանիշ կրող 6 գյուղերն ամբողջությամբ նոր բնակիչներով ելին բնակված, վորով և 1831 թվին սյունյակներում նրանք ներկայացրված են վորպես անբնակ:

Այդ յերկու շրջանները նորեկ բնակիչների (2374 + 870 = 3244 անձ) մի կարևոր մասը վերաբերում էր նույն այդ շրջաններին և մեկ գյուղից կամ շրջանից մյուսը փոխադրվելով դարձել է նորեկ բնակիչ: Դրան մենք կարող ենք համոզվել նաև նրանով, Վոր ձեռագիր մատյաններում չերբեմն ցույց է տրվում նաև թե վորտեղից է լեկել այդ նորեկ բնակիչը: Պարզ է, Վոր այդ 3.244 հոգուց մի մասը դուրս է մնում մեր հաշվառումից առհասարակ և հակադրվում է 1830—42 թվականների բնական աճմանը:

Մեր հիշատակած աղբյուրները, բացառությամբ Հայկական Մարզի, գրեթե բոլորն էլ հիշատակում են միայն պետական հողերի վրա ապրող գյուղացիներին և չեն հիշատակում յեկեղեցապատկան, կալվածատիրական հողերի վրա ապրողներին և կամ արտոնյալ դասակարգերին (հողերական, ազնվական և այլն): Դրանց համար կազմված էին առանձին մատյաններ, վորոնք, լրիվ չլինելու, հետևաբար և սխառեմը չխոսնակարելու համար, մեջ չեն բերված:

Այսպես որինակ Ստեփանավանում յեկեղեցապատկան հողերի վրա ապրող գյուղացիների թիվն էր 6 անձ, իսկ Մեծ Դարաքիլիսայում՝ 12 անձ:

Հողերական դասին պատկանողներից ապրում էին Դազախից ՀՍՈՂ-ին անցած գյուղերում՝

1. Դոշոթան	4 անձ
2. Լալաքենդ	9 »
3. Սեքար	18 »
4. Բարանա	4 »
5. Բաղանիս	9 »
6. Կոթիքենդ	25 »
7. Պիպիս	15 »
8. Մելիքենդ	4 »
9. Աչասու	58 »
10. Աղբան	5 »
11. Իջևան	22 »
12. Ուզունթալա	30 »
13. Խավարաձոր	9 »
14. Դրլըքենդ	1 »
15. Դուրումսուլու	11 »
16. Դալաչա	34 »
17. Կոզլ	38 »

Գումար 296 հայ

Պետք է նկատել, Վոր հողերականների մատյանի համաձայն Գյուլքենդում 1831 թվին Վոչ մի խլամ հողերական չպիտի լիներ (ինչվոր անկարելի էր), վորովհետև խլամ հողերականների գյուղացուցակում Գյուլքենդ հիշատակել մոռացված է:

Չանգեղուրում խլամ հողերականներ ապրում էին՝

1. Սիսիան	3 անձ
2. Դարաբասուլու	6 »
3. Ալիգարա	6 »
4. Լեհվալ	3 »
5. Վարդանաձոր	15 »
6. Փերդովդան	23 »
7. Շաբադիլու 1	3 »
8. Բաղբուրդ	2 »
9. Գիրաթալ	1 »
10. Խալալ	2 »
11. Բահարլու	3 »
12. Բայդաշ	2 »

69 անձ

Բայց մեր կողմից հաշվի չեն առնված այն բոլոր մոռացումները, վորոնք նշված են հատուկ մատյաններում: Այսպես Շամաղիների շրջանի 1831 թվի աշխարհագրի փամանակ մոռացվել են հայերից՝

1. Թաթլու	9 անձ
2. Հախում	2 »
3. Թաուզդենդ	6 »
4. Թաուզդալա	6 »
5. Դզլբուլալ	3 »

26 անձ

Աղբյուրներն անցած մաս՝

1. Չարդախի	28 անձ
2. Ենգիջարաղար	130 »

(ամբողջ գյուղ)

Նկատի ունենալով, Վոր Չանգեղուրում մասնատիրական (խանական) հողերի վրա ապրողները մեծ թիվ են կազմում և Վոր 1831 թիվը այդ տեսակետից շատ պակասավոր է մենք թույլ տվինք աստղանիշ նշանով դատելու պայմանով մեջ բերել 1842 թվի տվյալներն այն գյուղերի վերաբերմամբ, վորոնք չկային 1831 թվի տվյալների մեջ:

Չ. Աբարանի և Արթիկի շրջաններում աստղանիշներով նշանակված են այն գյուղերը:

վորոնք բնակված էին և գտնվում էին Հայկական Մարզից դուրս, վորովհետև նրանց պատկանող տվյալները վերցրված են անմիջականորեն պետարխիվից (1842 թ.):

Ե. 1830 թվականների աշխարհագրի տվյալներից քաղած մեր ամփոփումից ալսպիսով դուրս է մնացել միմիայն Կարսի նահանգից անցած ամբողջ շրջանը (բուն Աղբաբան Ախուրյան գետի աջ ափը):

Հայկական Մարզի մեջ բնակվող թափառական ցեղերը Շոպինը չի մտցրել բնակավայրերի աղյուսակում, այլ դրանց վերաբերմամբ տվել է հատուկ աղյուսակ, ուստի և թափառական ցեղերը դասավորելիս մենք նկատի չենք ունեցել Շոպինի տված բացատրությունները և բերած աղյուսակը\*):

Դրանք դասավորել ենք՝

ա. Թուրքիային անցած մասերում (Մարաշի, Դարաբաղի, Գեոզաքի, Չամիլի, Բիրուքի, Չալալի, Աղիզանլի, Շեյխերիզանլի, Գիլուրի 3952 անձ

բ. Նախիջևանի անցած մասերում (Դեմիրչիլի, Բյարիմբեկլու, Բանուկի 785 անձ

№ №	Տեղերի անունները	Վոր շրջանի վրա է դասվելու	Վոր բնակավայրերի մաս էին հայտնի Շոպինի	Հետագա ինչ բնակավայրի վրա կարելի չէ դասավորել	Բնակչություն
1	2	3	4	5	6
1	Բեյուք Չորանքյարա	Վարդաշապատ	Շորլու Մեհմանդար	Չորանքյարա	951
2	Ալիշարուրլի	»	Ռեհանլու	Ռեհանլու	75
3	Դարափափախ	»	Սեյիդքենդ	Սեյիդքենդ	17
4	Բատիկանլի	»	Դարխուն	Դարխուն Վերին	423
5	Կաֆարլի	Դամարլու	Նովրուզլու	Կաֆարլու	652
6	Չաֆարլի	»	Չիլախանլու	Չիլախանլու	82
7	Շեյխար	Վ. Ե. Գ. Ի	Խորվիրապ	Շիլար	232
8	Դարաչորլու	»	Ալի Մահմեդ, Ճաթկրան և Գյուլուկ Վեդի	Ճաթկրան	140
9	Տաշանլի	Աշտարակ	Փարբի	Փարբի	117
10	Դիլիսեյրանլի	Դուրգուղուլի	Աբտաշար	Աբտաշար	63
11	Ա. ս. ն. ի	«	Չիլբուխչի	Թափառական	324

Գումարը՝ 3076

\*) Աղյուսակը գեղեցկված է էջ 631—634-ում, իսկ ձեռնարկների մասին բացատրությունները՝ էջ 520—522:



Աղյուսակի համեմատութիւնը մի անգամ ևս գալիս է ապացուցելու 1842 թվի վերաբերմամբ մեր տեսութեան ճշտութիւնը, նկատի ունենալով, Վոր այս աղյուսակի տվյալները Փամբակ-Շորագյալի դիտարկումների վերաբերմամբ ավելի մեծ են քան 1842 թվի մեր ունեցածները: Այստեղ ել մենք վերջացնում ենք, վորովհետև մնացյալը նյութերի մանրամասն վերլուծման է պատկանում և այն էլ պատմական անցքերի հետ շարժապարհ:

1873 թ.

Այդ թվին կատարված աշխարհագրի տրվ-

	Հ ա յ	Թաթար	Այլ	Գումարը
1. Յերևան	—	— 21	—	— 21
2. Ալեքսանդրապոլ	+ 19	—	—	+ 19
3. Եջմիածին	— 78	—	+ 68	— 30
4. Նոր-Բայազետ	—	—	—	—
Գումարը	— 59	— 21	+ 68	— 12

Հավանական է, վոր գյուղ առ գյուղ տրվյալներում վրիպակներ ստացվել են, այդ վրիպակները մենք անգոր ելինք ուղղել \*\*\*):

Աշխարհագրից ցույց է տալիս Յերևանի նահանգում 538,730 անձ, վորի համապատասխան մասերը մտել են մեր ցուցակներին մեջ, բացի վերոհիշյալ դիտարկումներից: Սակայն այդ թվի մեջ չեն մտել հարկ չվճարողները թվով 8963 հոգի (վորից 1294-ը՝ քաղաքներում): Թե գրանից վորքան էր ապրում ՀՍԽՀ-ի մասը կազմող շրջաններում մեզ անհայտ է, ուստի և պայմանականորեն վերցնում ենք 6000 հոգի, վորից՝ հայ 2500, թաթար՝ 2500 և այլք՝ 1000): Այդ 6000 հոգին մենք

կորդոնի պոստեր

1. Բայանդուր
2. Ղարաջա
3. Արփաչալ վերին
4. » ներքին

Տեսնություն

Բնակիչ

1	15	} Ներկա Լինինա-կանի շրջանում:
1	12	
1	30	
1	12	

\*) № 83 աղբյուրը:

\*\*) № 35 և 36 աղբյուրները:

\*\*\*) Գրքը թեև ունի «поправка» բաժին, բայց այդ մասին չէ հիշատակված:

կորդոնի պոստեր	Տեսնություն	Բնակիչ
5. Բանավան	1	10
6. Ղաչուղի Ղազանչի	1	15
7. Նովոդրոյցկի	1	15
8. Շիշթափա	1	30
9. Թալինակի (Ջալաբ հեշուտի մոտ)	1	17
10. Ղ Ե Ղ ա ճ	1	19
11. Ղազարապատ	1	19
12. Դավշան զըլաղ	1	12
13. Աբտրահաման	1	21
Գումարը 13		227

կա և մի գյուղ «Ֆիրդո» (ներկա Ֆինտո), վոր ցույց է տրված վորպես Լինինականցիների քոչատեղ, 30 տնտեսութեամբ, բայց առանց բնակիչների \*):

Բավական շատ բնակավայրեր ել կան, վորոնց բնակչության տեղը գիծ է քաշված: Դրանց թիվը ըստ հին վարչական բաժանումների չեղել է՝

Յերևանի գավառում 2 (Ուլուխանլու \*\*) և Մհուր (տես Պտղնի):

Եջմիածնի գավառում 9 պահակատներ (Ղզղուղլա, Դուղքինդ, Գեորգիեվսկի, Վերին և Ներքին Գարվանսարաները, Միրզախան, Այրիսֆաթ, Աբդրահաման, Ղազբին):

Շարուր — Դարաբագզում 10 հատ, վորոնցից և վոչ մինը ՀՍԽՀ-ի ներկա սահմաններում չէ:

Ալեքսանդրապոլում՝ 17-ը վերհիշված 13 պահակատներից բացի Ջաջուռի և Անիի պահակատների ու Ֆիրդո քոչատեղից բացի նաև Սալուս քոչատեղը:

Նոր Բայազետում 2-ը (իսկ ունենք 4-ը — Մաման (ղինվորականների խոտի հնձնավայր), Ուշթափալար (փոստակայան), Այրիջա (քոչատեղ) և Գյասիկբաշ (ավերված գյուղ):

1873 թվին մեր ցուցակ-աղյուսակներով չենք կարողացել ընդգրկել Ախուրյանի աջ ափը և Բորչալուից ՀՍԽՀ-ին անցած մասերը: Բորչալուի վերաբերմամբ մեր վորոնումները ավին միայն աննշան արդյունք, այն՝ վոր մենք թիֆլիսում վրաստանի պետարխիվում գտանք միայն մի մասը: Յեթե վերցնելու լինենք Բորչալուն ամբողջապես, այդ դեպքում բնակչության աճումը 1873—1886 թվերին լինում է արական սեռի համար 23.72%, իսկ իգական սեռի համար՝ 23.93% \*\*): Մենք, վորպես որիցնդիր, վերցնում ենք 24% աճում և 1886 թվի տվյալներից համապատասխան պակասեցումներ կատարելով, ստանում ենք 1873 թվի հաշվարկված բնակչությունը և այս տվյալները վերածելով ըստ ազգութիւնների ստանում ենք՝

	Հ ա յ	Թաթար	Այլ	Գումար
Ալլահվերդի	4.087	629	195	4.911
Ստեփանավան	6.869	877	2.972	10.718
Ղարաքիլիսա	634	—	—	634
Գումար	11.590	1.506	3.167	16.263

\*) 30 թիվը առնված է փակագծի մեջ:

\*\*) Չրիթիկ Ետրեմանլու գյուղի հետ Տես ցուցակ-աղյուսակների մեջ չմտած բնակավայրերի ցուցակը № 222 բնակավայրը:

\*) № 92 էջ 391. ուր ցույց է տրված նաև հայերի աճման տոկոսը արական 30.11% և իգական 25.59%: վորն զուգադիպում է Մարց և Մղարթ գյուղերի միջին աճումի տոկոսին 27.42%:

1873 թվին Ախուրյանի աջ ափը դեռևս գտնվում էր Թյուրքիայի ձեռքին, դրա համար էլ վոչ մի վիճակագրական տվյալ չունենք: Կարելի չէ յենթադրել, վոր 1873—1886 թվականների աճման դիմաց ունենք համազոր նվազում է հաշվով 1876 թվի ուստի—թրքական

Ներկա շրջանները	Հ ա յ	Թաթար	Այլ (կարափափախ)	Գումար
Աղբաբա	200	—	7.100	7.300
Լենինական	300	—	2.400	2.700
<b>Գումար</b>	<b>500</b>	<b>—</b>	<b>9.500</b>	<b>10.000</b>

Աշխարհագրի ձեռագիր մատյաններում տուրք վճարողների անվանացուցակի ներքև-վում, գումարային տվյալներից հետո մեջ են բերված տուրք չվճարողները, և ապա գրված է ընդհանուր բնակչության թիվը: Այդ իսկ պատճառով այդ ուղղությամբ նոր հաշվարկումների պետք չի մնում Յերևանի նախկին նահանգից դուրս մնացած շրջանների վերաբերմամբ:

Այդպիսով ունենում ենք հաշվարկված բնակչություն 26.263 անձ, վորը դարձյալ կարելի չէ փոքրացնել հետագայում, չեթե հատնաբերվեն Բորչալուի նախկին գավառի գյուղ առ գյուղ տվյալները:

1 8 8 6 թ.

Ոգտվել ենք ընտանեկան ցուցակներ կազմելու Անդրկովկասյան համապարփակ աշխարհամարի տվյալներից\*), վորոնք մի մեթոդով դասավորված ամբողջական տվյալներ են և վոչ մի հաշվարկման պետք չունեն:

1 9 0 8 թ.

1908 թվի տվյալները մենք ոգտագործում ենք գլխավորապես ապացուցանելու 1914 թվի տվյալների ճշտությունը: Այդ առթիվ վորոշ չափով մենք կանգ ենք առել 1914 թվին վերաբերող բացատրություններում (տես ներքև):

1908 թվի տվյալները ստանալու համար մենք ոգտվել ենք՝

Յերևանի նահանգին վերաբերող մասերի տվյալները վերցրել ենք 1910 թվի «Памятная Книжка» Эриванской губ. գրքում (№ 86 աղբյուր) տպագրված Գյուղացուցակներից, Ելիզավետպոլի նահանգին վերաբերող տվյալները՝

\*) № 84 գիրքը:

պատերազմից հետո դեպի Թյուրքիա հեռացածները, ուստի պայմանականորեն 1873 թվի համար ընդունում ենք նույնքան բնակիչ, վորքան վոր կար 1886 թվին, այն է կոր հաշվով 10.000 անձ, դասավորելով այն հետևյալ ձևով՝

1910 թվի «Памятная Книжка» Елизаветпольской губ. գրքում (№ 87 աղբյուր) տպագրված Գյուղացուցակներից, Բորչալուի ու Աղբաբան 1909 թվի կովկասյան Որացույցի (№ 85 աղբյուր) Այբենական ցուցակներից:

Տվյալները լրիվ լինելով առանձին հաշվարկումներ չեն կատարված:

1 9 1 4 թ.

1914 թ. (հունվար), վորպես համաշխարհային պատերազմին նախորդող տարի շատ մեծ կարևորություն ունի: Բայց դժբախտաբար 1897 թվից հետո վոչ մի աշխարհագիր կամ մարդահամար չի չեղել մինչև 1916 թվի գյուղատնտեսական վիճակագրությունը: Իսկ 1916 թիվը չի կարող իսկական պատկերը արտացոլել, վորովհետև վոչ միայն արդեն պատերազմի յերկրորդ տարին էր, այլ և բնակչության մեծ տեղատվություն էր կատարվել (հայերի փախուստը Թուրքիայից):

1914 թ. մենք ներկայացնում ենք 2 աղբյուրներով:

ա. Աղբյուրը հիմնվում է 1915 թվի «Кавказск. Календар»-ի բնակավայրերի այբբենական ցուցակի վրա: Այդ աղբյուրի տվյալները լրիվ են, բացի հետևյալ մոռացումներից: 2-ի նշանակված Մեղրու շրջանի Թեյ գյուղի բնակչության թիվը, այլ տեղը դիժ է քաղված, իսկ մոռացված են Յերևանի գավառի Վեդիի շրջանից Գյոլ Ջղին և Հախս, Չանգեղուրի գավառի Դափանի շրջանից Փուխրուտ և Քիրս, իսկ Լոռիի Ալահվերդու շրջանից Վերին Ախթալա գյուղերը: Այդ առթիվ մենք հաշվարկում չենք անում՝ պայմանականորեն յենթադրելով, վոր դրանց բնակչությունը հաշված է այլ գյուղերի վրա (ինչպես հաճախ պատահում ենք նույնիսկ ներկայիս):

բ. Աղբյուրը Յերևանի նահանգի դպրոցական հոգաբարձուի կողմից 1914 թվին կազմված ձեռագիր աշխատություններն են դպրոցական ընդհանուր պարտադիր ուսուցում մտցնելու ծրագրի ներքին համար: Այդ աշխատանքներում մեջ են բերված գյուղ առ գյուղ բնակչության տվյալները վերցված համաձայն կազմողների հայտարարության «Վիճակագրական բաժնից»: Այդ աղբյուրով մենք լրիվ տվյալներ ունենք Յերևանի նահանգի վերաբերմամբ:

Մոռացված են միայն մի շարք գյուղակներ՝ Կոտայքից, Դամարուից, Ինչպես նաև Արագածոտնի դաշտը, վորոնք իբրև գյուղակներ դեռևս չեն մտել «գյուղեր»-ի ցուցակներում, ուստի և նրանց բնակչությունը հաշված պետք է լինի այլ գյուղերի հետ:

Այդ յերկու աղբյուրներն՝ իրար հետ և 1908 ու 1916 թվերի հետ համեմատելիս՝ հետևյալն ենք նկատում (մի կողմ թողնելով առանձին գյուղերի միջև յեղած տարբերությունները):

ա. 1914 թ. առաջին աղբյուրը (Кавказск. Календар) պարզապես 1908 թվի ցուցակներից («Памятная Книжка Эриван. губ») արտագրել է մի շարք շրջանների բոլոր գյուղերի տվյալները: Դրանք են՝ (հին—1914 թվի վարչական բաժանումներով) 1. Դարալագյազ, 2. Թալին:

բ. Ըստ գյուղերի յերբեմն իրարից շատ հեռանալով, գումարային տվյալներով գրեթե իրար զուգահեռից թվեր ունի ըստ նոր վարչական բաժանումների միմիայն Արթիկը:

գ. 1908 թվի տվյալներից պակաս բնակչություն են ցույց տալիս կամ գրեթե նույնանում են ըստ ա. աղբյուրի 1. Քեշիշքենդ, 2. Փաշալու, 3. Դուրդուղուլի, 4. Դիլիջան, 5. Դափան, 6. Յերևան քաղաքը, իսկ ըստ բ. աղբյուրի վոչ մեկը:

դ. Ուշի ուշով դիտողը նկատում է, վոր հաճախ վորոշ շրջանների վերաբերմամբ 1914 թվի բ. աղբյուրը գյուղ առ գյուղ համեմատելիս 1908-ի հետ վոչ մի տեղ նվազում ցույց չի տալիս, այլ միատեսակ աճում, վորը հավասար է գրեթե 7—8% ի: Հավանական է այն, վոր այդ ցուցակները կազմող «Վիճակագրական վարչությունը» հաճախ չի ունեցել ձեռքին նոր, տեղերից (թեկուզ վարչական ճանապարհով) հավաքված տվյալներ և ուստի ուղղակի վերցրել է 1908 թվի տվյալները ու ավելացրել 7—8 տոկոս աճում:

Այդպիսի պարագաներում 1914 թ. ա. աղբյուրն ընդհակառակն վերցրել է 1908 թվի տվյալներն առանց վերեկ փոփոխության, նույնությամբ (որ. Դարալագյազ, Թալին): Իսկ այլ վայրերում ցույց է տալիս հաճախակի մե նվազումներ 1908-ի հանդեպ, վորի ճշգրտությունն ապացուցվում է նաև հետագային 191 թվի գյուղատնտեսական հաշվուման տվյալներով:

1914 թվի ա. աղբյուրը, բացի մի քանի գյուղերից, լրիվ է և հաշվարկման պետք չունի, թեև տպագրական վրիպակներով լի չէ (Դարալագյազի Սաչիկ և այլ գյուղերը, վորոնց թիվը չի զուգահեռվում 1908 թվի տվյալներին, Դիլիջանի Միխայելովկա գյուղն և այլն), վորոնք սակայն հնարավոր չեն ուղղել, վորովհետև կոնսորթ թիվ չունեն: Նախորդ և հետագա տարիների միատեսակ տվյալների հիման վրա միայն մենք մեզ թույլ տվինք ուղղում մտցնել մի քանի գյուղերի ազգությունների վերաբերմամբ, այդ մասին անպայմանորեն հիշելով ծանոթությունների բաժնում:

1914 թվի բ. աղբյուրի տվյալները նախկին Յերևանի նահանգից դուրս գտնված շրջանների վերաբերմամբ լրացնելու համար մենք կատարել ենք հաշվարկում 1914-ի գումարային տվյալներն ուղղակի փոխադրելով 1914-ի սյունյակը: Այդ լրացումներից հետո 1914 թվի ա. աղբյուրի տվյալները թեև գերակշռում են 1914-ի բ. աղբյուրի տվյալներին—ՀՍՍՀ-ի գումարային տվյալներում մոտ 40.000-ով, բայց պակաս են մնում պաշտոնական հրատարակությունից մի յերկու տասնյակ հազարով\*), վորը հետևանք է թերևս և այն յենթադրության, վոր ժամանակավոր բնակչությունը յերկու անգամ է հաշվի առնված պաշտոնական տվյալներում\*\*):

1 9 1 6 թ.

1916 թվին կատարվեց համառուսական առաջին գյուղատնտեսական վիճակագրությունը, վորը և տարածվեց Անդրկովկասի վրա:

\*) Փորձնական աշխատանքը Յերևանի նահանգի նախկին 4 գավառների (Յերևան, Եջմիածին, Նոր-Բայազետ և Լենինական) սահմաններում ցույց տվեց, վոր պաշտոնական տվյալներն (կովկասյան որացույցում) մոտ 12.000 անձով ավելի շատ են քան այբբենական ցուցակով վերականգնված տվյալները:

\*\*\*) № 93 էջ 8:

Յերևանի նահանգում վիճակագրությունը սկսվել է 1916 թվի հունիսի 15-ին և ավարտվել նույն թվի ոգոստոսի 30-ին: Սակայն համաշխարհային պատերազմի և այլ դժվարությունները\* պատճառ յեղան, վոր մի շարք յերկրամասերը չվիճակագրվեցին: Չվիճակագրվածներից հիշատակենք Կարսի ամբողջ մարզը, վորի մի մասը այժմ մտնում է ՀՍՍՀ-ում (Ախուրյանի աջ ափը), Յերևանի նախկին գավառի Բուրուկինի հասարակությունը, վորը ներկայումս փոխանցվել է ամբողջությամբ Թուրքիային և մի քանի գյուղեր այլ շրջաններում:

Այդպիսով ՀՍՍՀ-ի ներկա շրջաններն ամբողջությամբ բացի վերհիշվածներից վիճակագրվել են: Բայց պետք է ընդունել, վոր վորոշ շրջաններում այդ վիճակագրությունը չեղել է չեֆեկտիվ: Այդ ուղղությունը վոչ միայն ունենք ձեռագիր վիճակում այդ վիճակագրության ղեկավար անձանց բաղորտներ, վիճակագրական կեղծումների (նստած կարենեում թվեր կազմել) մասին Ղարաբաղի շրջանում\*\*), այլ և կան զանազան հեղինակների դիտողություններ\*\*\*), նույնպես և մեր այս աշխատանքը գալիս է այդ ապացույցներ: Բացի այդ Ձանգեղուրի վերաբերմամբ բերենք մի փաստ չեվս:

Ըստ Կովկասյան որացույցի Ձանգեղուրի նախկին գավառում կալին՝

Առ 1-ն հունվարի 1914 թ.	209.951 բնակիչ
» » 1911 թ. նույնիսկ	219.313 բնակիչ
1897 թվի մարդահամարով ունենք	137.871 բնակիչ
1916 թվի գյուղվիճակագրությունով ստացվել է	138.973 բնակիչ:

Պարզ է, վոր այստեղ թերհաշվառում կա, ինչ վոր արտացոլացել է և մեր տվյալներում: Իժբախտաբար գյուղ առ գյուղ տվյալներ չունենք ճշտելու այդ:

Յերևանի նահանգից ցուցակներում չկան Չորանքյարա մեծ գյուղը և մի քանի փոքրերը: Արարանի շրջանի Բլխեր գյուղի տվյալ

\* ) № 90 էջ II:  
 \*\*) № 93 էջ 9 հատուկ հիշատակություն Ձանգեղուրի մասին:  
 \*\*\*) Բաջայեվի գեկուցումը Գանձակի նահանգապետին, վորի մեջ կան նույնիսկ որինակներ թված թվերի

ները թեև միևնույն մանրամասնությամբ կային ցուցակների մեջ, բայց գումարային տվյալներում չեն մտել:

Ահա մի քանի փաստեր, վորոնք վորոշ չափով նշում են 1916 թվի տվյալների թերությունները:

Անդրկովկասին վերաբերող նյութերից լույս տեսավ մի միայն նախնական ամփոփումները, „Предварительные итоги всероссийской сельскохозяйственной переписи 1916 года“ выпуск II. Кавказ, изд. 1917 г. Петроград րրքում:

1929 թվին հայտնաբերվեցին գյուղական ամփոփումների ձեռագրերը, վորոնք պահվում են Պետպլանում (ժողտնտեսաշվար): Այդ ձեռագրերը, բացառությամբ Ձանգեղուրի, շատ մաքուր և կանոնավոր վիճակում են և գումարները լիովին զուգադիպում են արդեն հրատարակված նախնական տվյալներին: Մեր կողմից կատարված են միմիայն առանձին ուղղումներ (թվաբանական և արտադրական վրիպումների) և դրանցից կարևորները նշված են ծանոթությունների բաժնում:

Հրատարակված ամփոփումներում քոչվորները հաշվված են այն գավառում, ուր և նրանց գտել են ամառ ժամանակը: Վորովհետև այդ տվյալները գյուղ առ գյուղ ելին մեջ բերված, ուստի և մենք բարվոք համարեցինք նրանց հաշվել ընդհանրապես այն գավառներում և գյուղերում, վորոնց մշտական բնակչությունն էլին կազմում:

Ուսումնասիրողներին այդպիսի տվյալները հեշտությամբ ջոկելը դուրացնելու համար, մենք այդ տվյալները միացրինք վոչ թե արդեն գյուղի պատրաստի տվյալներին, այլ մեջ ենք բերում նրանց ներքևում 2-րդ տողով և յերկուսը միասին փակագծի մեջ առինք, ցուցց տալու համար, վոր դրանք միանալու յեն, այդ առթիվ կարելի չե գրախ Վեդիի շրջան Դավալու, Շիղու, Չիվանդարա, Ալի Մահմեդ և այլ գյուղերը:

ՀՍՍՀ-ի ալյայան արտաները միշտ էլ ընդունել են քոչվորներ հարևան հանրապետություններից: 1916 թվին մենք տեսնում ենք քոչվորներ նույնիսկ Բագվի նահանգի Ջեվաթի գավառից:

Քոչվորների ցուցակներ ունենք Շարուր

Դարալագյազի և Նոր-Բայազեդի գավառներինը, իսկ մյուս գավառներից վոչ\*):

Ըստ այդ տվյալների այդ յերկու գավառներում քոչվորներ յեղել են՝

Լ Դարալագյազի սարեում

	արական	կզական	գումարը
1. Ձանգեղուրի գավառից	15	24	39
2. Շ ու շ ու	56	50	106
3. Ջեվաթի (Բագու) գավառից	815	655	1.470
	886	729	1.615

բ. Նոր-Բայազեդի սարեում

1. Ներկայիս Թուրքիային անցած Բուրուկինի հասարակությունից	1.967	1.931	3.898
2. Ներկա Վեդիի շրջանից	1.882	1.956	3.838
3. » Ղամաղուռի շրջանից	87	75	162
4. Նախիջևանին անցած Սաղարակի հասարակությունից	1.685	1.377	3.062
Նախկին Յերևանի գավառից	5.621	5.339	10.960
5. Սուրմալուից (այժմ Թուրքիա)	533	487	1.020
6. Շարուրից (Նախիջևան) **)	2.278	2.083	4.361
	8.432	7.909	19.341

Խորհրդային շրջանում Լենինականի, Լոռվա, Իլիջանի և Ձանգեղուրի սարերը դեռևս բարձրանում են տասնյակ հազարավոր քոչվորներ, թե վրաստանից և թե Ադրբեյջանից: 1916 թվին այդպիսիների թիվն ավելի շատ էր. բայց տվյալներ չունենք կամ թե այն բացերը 1916 թվի գյուղվիճակագրության թերություններն են:

1916 թվի գյուղվիճակագրության գույքնթաց կատարվեց և փախստականների վիճակագրություն\*\*), բայց նրա տվյալները չեն

\* ) Ըստ Բաջայեվի (Յելիգավետապոլի նահանգի վիճակագրության ղեկավար) նահանգապետին ներկայացրած գեկուցարի նույնու գավառից 2800 քոչվոր տնտեսություններ յեղել են Ձանգեղուրում, բայց կենսավիճակում յեղած նյութերում այդ ցուցակը չկար և բացի այդ հրատարակված ամփոփումներում նույնպես այդ թիվը չի մտել:  
 \*\*) Այդ թվից 322-ը ներկա Դարալագյազի շրջանից:  
 \*\*\*) Յես ինքս նշանակված էլի Յերևանի քաղաքի փախստականների ցուցակագրման ընդհանուր ղեկավար:

մտել վոչ գյուղ առ գյուղ ցուցակներում և վոչ էլ հրատարակված նախնական տվյալներում, ուրեմն ՀՍՍՀ-ի ներկա տեղիտղիտղի վրա ապրող մոտ 200.000 հայ փախստականներ չեն մտել նաև ներկա հրատարակության մեջ: Ընթերցողը դրանում կը համոզվի, յեթե համեմատության մեջ դնի գյուղ առ գյուղ տվյալները Արարատյան դաշտի գյուղերի վերաբերմամբ յեղած 1914 և 1908 թվի տվյալների հետ:

Քաղաքային բնակչությունը թեև 1916 թվին հաշվահամարի չի յենթարկված, բայց քաղաքների բնակչությունը հրատարակված տվյալներում հաշվի առնված է:

Յերևանի նահանգը ունի 5 պաշտոնական քաղաքներ Յերևան, Ալեքսանդրոպոլ (Լենինական), Նախիջևան, Նոր-Բայազեդ և Որդուբադ, վորոնց ազգաբնակչությունը գյուղատնտեսական վիճակագրության հրատարակված նախնական տվյալներում միասին հաշվված է

125.086 հոգի\*), բայց ցույց չի տրված բնակչության թիվը ըստ առանձին քաղաքների: Կովկասյան Որացուցի տվյալներով 1916 թվի հունվարի 1-ին, այդ հինգ քաղաքների բնակչությունը հավասար էր 132.561-ի, վորից 92.480-ը մշտական բնակիչներ էին: Հաշվահամարը 125.086 հոգին, ըստ առանձին քաղաքների դասավորելու համար մենք նպատակահարմար դասեցինք ամբողջ տարբերությունը (132,561—125,086) 7,473 հոգին զեղչել Յերևան քաղաքից, վորն ուներ 22,001 մշտական բնակիչների կողքին 29,285 ժամանակավոր բնակիչներ (վանեցիների, արշակերտցիների և հին բայազետցիների գաղթը) մանավանդ վոր 1914 թվի հետ համեմատած մյուս քաղաքները 1916-ին գրեթե նույն բնակչությունը ունեին, ինչ վոր 1914-ին. որինակ Լենինականը 1914-ին ուներ 51316 անձ, իսկ 1916-ին 51.874 անձ և միայն Յերևանն էր կազմում բացառություն (փախստականներն

հաշվելու համար) ուրեմն նրանց էլ պետք էր դուրս հանել 1916 թվի հաշվառման ընդհանուր միտրինակությունը (առանց փախստականների) պահպանելու համար:

Այդպիսի պայմանականությունից հետո կովկասյան Որացուցի առ 1-ն հունվարի 1916 թվի տվյալները նույնությունում փոխադրվել են մեր աղյուսակները: Նույնպես անփոփոխ փոխադրված է Գորիս քաղաքը:

Ձեռագիր ցուցակներում չկա մասնավոր տնտեսությունների (частновладельческое хозяйство) բնակչություն, ըստ առանձին բնակավայրերի, այլ կա միայն գյուղացիական տնտեսություններին:

Ուստի և պետք է մասնավոր տնտեսություններից բնակչությունների դասավորումը կատարել վորոշ պայմանականություններով:

Ըստ հրապարակված նախնական տվյալների կային մասնավոր տնտեսություններ:

Նախկին դավանները	Ընդամենը	Դասավորված են՝	
		ՀՍԽՀ-ում	ՀՍԽՀ-ից դուրս
1	2	3	4
1. Ալեքսոպոլ	26	26	—
2. Նախիջևան	211	—	211
3. Նոր-Քայազետ	195	195	—
4. Սուրմալու	527	—	527
5. Շարուր-Դարալագյազ **)	221	—	221
6. Յերևան	304	304	—
7. Եջմիածին	580	580	—
<b>Գումարը Յերևանի նահանգի</b>	<b>2064</b>	<b>1105</b>	<b>959</b>
8. Բորչալու **)	1557	800	757
9. Ջանգեզուր **)	2810	2810	—
10. Ղազախ ***)	3104	1084	2020
	<b>9585</b>	<b>5749</b>	<b>3786</b>

\*) № 90 էջ 125:  
\*\*) Ըստ տեղի տարիների և շրջանների դասավորման համար վոշ մի տվյալ չունենալով բաժին էլ ենք պայմանականորեն:

\*\*\*) Ղազախ II և III գավառների տվյալները հաշվել ենք ՀՍԽՀ-ում, իսկ I և IV գավառների տվյալներն ո՞ր 10 անձ մեծավաճառներ (гуртовщик) թողել ենք Ազրբեջանին:

Նկատի ունենալով, վոր այդ մասնավոր տնտեսությունները բաշխումը ՀՍԽՀ-ի ներսում ըստ շրջանների հնարավոր չէ, ուստի և նրանց մեջ ենք բերում միմիայն ՀՍԽՀ-ի ընդհանուր ամփոփումներում:

Անցնելով գյուղացիական տիպի տնտեսություններին, տեսնում ենք, վոր գյուղ առ գյուղ

Ցուցակներում պակասող գյուղերը	Մեր կողմից նրանց հաշվարկված բնակչությունը 1916 թ.
1. Ալբրիտֆաթ (Ղուրդուղուլի)	150
2. Բեգիկ	200
3. Ղամշլու	250
4. Չորանքյարա (Վաղարշապատ)	3200
5. Ղուլիբեկլու Ներքին	500
6. » Վերին »	250
	<b>4550</b>

Այս հաշվարկումը ապացուցելու համար հետևյալ բացատրությունը կարելի չէ տալ:

Այս բոլոր գյուղերի բնակիչները (թե թըրքական Չորանքյարա և թե մնացած քրդական գյուղերը) գրեթե ամբողջապես քոչվորական կյանք են վարում, և հավանական է, վոր 1916 թ. գյուղվիճակագրությունը նրանց գտած չըլինի իրենց ձմեռային բնակատեղերում: Բայց նրանց անունը կամ բնակչության թիվը չի մտել և ուրիշ գավառի տվյալներին մեջ, ուստի և պետք է լենթադրել, վոր չեն վիճակագրված:

Հրատարակված պաշտոնական տվյալները ցույց են տալիս, վոր չի վիճակագրվել 5520 անձ\*): Ձեռագիր ցուցակներում պակասում է ամբողջապես Բուրուկինի հասարակությունը (նրա \*\*), վորը 1914 թվի տվյալներով 4800—4900 բնակիչ ուներ:

1916 թ. Նոր Բայազետի սարերում քոչվորների խմբում մենք ունենք Բուրուկինի հասարակության պատկանող 3898 անձ\*\*\*), ուրեմն իրենց մշտական բնակավայրերում մնացել էին մոտ 1000 հոգի:

Եթե այդ 1000 անձը գումարենք վերև հիշված չվիճակագրված գյուղերի մեր կողմից հաշվարկված բնակչության (4550 անձ) վրա՝ կունենանք 5.550 չվիճակագրված բնակիչ: Իսկ

\*) № 90 էջ 35:  
\*\*) № 90 էջ 114:  
\*\*\*) № 90 էջ 42:

տվյալները լրիվ են: Կան թերություններ և բաց թողումներ միմիայն առանձին շրջաններում, վորոնց լուսաբանման և բաց թողումների հաշվարկմանն անցնում ենք:

Ցուցակներում պակասում էին հետևյալ գյուղերը. —

պաշտոնական տվյալները ցույց են տալիս 5520: Մենք այդ յերեսուն հոգին էլ հաշվում ենք Բուրուկինի հասարակության վրա (թուրքիային և անցել) և ստանում ենք այնտեղ չվիճակագրվածների թիվը 970 անձ և վոշ թե 1000 անձ:

Այդպիսով այդ 6 գյուղերի վերաբերմամբ մեր հաշվարկման ճշտությունն ապացուցված ենք համարում:

Ձանգեզուրի նախկին գավառի տվյալներն գյուղ առ գյուղ չունենք, այլ կան գյուղական հասարակություններով շատ անմաքուր վիճակում, չերբմն մի քանի որինակով, բացի այդ II և IV գավառները միացված են և գյուղական հասարակությունների անուններն էլ չեն գրված (տեղը բաց է թողնված, մոռացել են գրել) այլ կան միայն թվեր:

Այդ զեֆեկտներով միասին դրանց ամբողջ գումարը հավասար է 136.163 հոգու, վորից արական 67.016, ինչ վոր նույնությունում գուղադիպում է հրապարակված նախնական տրվյալների հետ\*):

I և V-րդ գավառներն ամբողջությամբ մտնում են ներկա ՀՍԽՀ-ի սահմանների մեջ:

III գավառից ՀՍԽՀ-ին անցած է համարվում Արծեվանիկի հասարակությունը՝ բացի Սեյիդլար (1914-ին 446 բն.) և Շիրվանշախլու (110—բն.) գյուղերից: Արծեվանիկի հասարա-

\*) № 90 էջ 76:



կուլթուրը 1914-ին ուներ 5487 ընտելիչ, իսկ 1916-ին 4740 ըն.: Բարանդի, Մուլա Բուրունի, Սոջավանի և Դոնտարլիի հասարակութուններն ամբողջությամբ թողնված են Ադրբեյջանին: Թեմուր Մուսկանլիի և Ուստանի հասարակութունները բաժանված են յերկու հանրապետութուններ զրա՝ նրանց բաժին ընկած գյուղերի 1914 թվի բնակչության համեմատականության սկզբունքի վրա: Թեմուր Մուսկանլիի հասարակութունը 1914-ին ունեցել է 6234 ըն., վորից ՀՍՍՀ-ին անցել է 1208 հոգի, կամ 19,4 տոկոս, վորով 1916 թվի բնակչությունից վերցնում ենք 19,4 տոկոս, 4696 հոգուց 911 հոգի: Ուստանի հասարակութունը 1914-ին ունեցել է 8160 ըն., վորից 4412-ը կամ 54,2 տոկոսը ՀՍՍՀ-ին անցած գյուղերում, 1916 թ. 6710 բնակիչներից նույնպես վերցրել ենք 54,2 տոկոսը 3637 հոգի:

Ավելի բարդ է II և IV գավառների բնակչության բաշխումը, վորոնք իրար խառնված են, բնակչութունը տրված է ըստ գյուղահասարակութունների, բայց նույն այդ հասարակութունների անունները չեն գրված: Սնդիրն ավելի բարդանում էր նաև նրանով, վոր 1914-ին մենք ունեյինք 15, իսկ 1916-ին 13 գյուղահասարակութուններ:

Հաշվարկության ժամանակ պայմանականորեն ամեն մի գավառից դուրս ենք թողնում մի գյուղահասարակութուն II ըզից Փերչիվան (Ադրբեյջան) և IV ըզից Որդաբլու (Ադրբեյջան): Այս գավառում ենք գյուղահասարակութուններն ըստ ուսական ալբանի, բացի Ղալաբարայից և ստանում ենք հետևյալը (ճշտութունը չափելու համար գնում ենք նաև 1914 թվի տվյալները):

Գյուղահասարակութուն	Բնակչութուն 1914-ին	Բնակչութուն 1916-ին
1. Ատազոր (Շվանիձոր)	6454	4604
2. Հաջի Սամլի	5984	3872
3. Գ ո ռ ս	11483	6782
4. Դարզլի	6233	6049
5. Ջեջիմլի	6581	2647
6. Դ ը դ (Տեղ)	3902	2326
7. Չանդեյան	10668	4505
8. Մ ե դ ը ի	7550	4684
9. Մինքենդ	7896	4979
10. Սանածախ	7949	3944
11. Սինդիրակ (Սնձորեակ)	8835	3710
12. Ղալաբարա	4018	1687
13. Շխավեն	3639	1367
14. Որդաբլու (Տես Դարզլու)	7977	—
15. Փերչիվան (Տես Մինքենդ ?)	3412	—
	102581	51156
Վորից՝ II գավառում	63699	31314
» IV »	38882	19842

Ըստ գավառների համեմատութուն անելիս ստանում ենք նույնը: II գավառը հավասար համեմատական բաշխման սկզբունքով պետք է ստանար 31.760 ըն., այս գասավորումով ստա-

ցել է 31.314 ըն.: Այսպիսով կարծում ենք, վոր մեզ հաջողվել է II և IV գավառների բնակչութունը գասավորել ըստ գյուղահասարակութունների:

Այս գասավորումից հետո Ատազոր, Գորիս, Տեղ, Մեղրի, Սինդիրակ հասարակութուններն ամբողջությամբ հաշվված են ՀՍՍՀ-ում, իսկ Որդաբլու, Չանդեյան, Հաջի Սամլի, Ղալաբարա, Մինքենդ, Փերչիվան և Շխավենի հասարակութունները Ադրբեյջանում, մնացածները 1914 թվի բնակչության համեմատականության հիման վրա բաշխված են, այն է՝ Սանածախի հասարակութունից 43,4 տոկոս, Ջեջիմլիից 32,2 տոկոս և Դարզլիից 48,8 տոկոս հաշվված են ՀՍՍՀ-ի վրա:

Այդպիսով ստանում ենք Չանդեյանի նախկին գավառից ՀՍՍՀ-ին անցած 91.685 ըն.: Այդ աշխատանքը կատարելուց հետո ամեն մի գյուղահասարակության ավյալները նշանակել ենք այդ հասարակության կենտրոնական գյուղի դիմաց, իսկ մյուսների դիմաց նշում ենք արել, ցույց տալով տվյալ գյուղի բնակչութունը վոր գյուղի վրա հաշվված լինելը:

Յերիզավետապոլի նահանգում չվիճակագրված գյուղերի բնակչութունը ցույց է տրված 41.194 անձ\*): Համաձայն պաշտոնական հայտարարության չի վիճակագրված միայն Կսրյակի նի գավառի Պարակաստանի սահմանակից գյուղահասարակութունները 3722 ծուխ 27.499 ըն.\*\*), տարբերութունը 13,695 հոգու, վորի համար բացատրութուն չկա պաշտոնական հրատարակության մեջ: Կարող է այդ վերաբերել Նուխու շրջանից Չանդեյանի չեկած քոչվորներին, կամ հենց իրեն Չանդեյանին և կամ նույն նահանգի մի այլ գավառի, վորը մենք պարզել չենք կարող, ուստի և այդ ուղությամբ նոր հաշվարկում չենք կատարում:

Վորովհետև՝ ամեն մի գավառի սարերում գտնվող քոչվորները հաշվված են այդ գավառի վրա, կարելի էր յենթադրել նույնպես, վոր Չանդեյանի բնակչության նվազման պատճառներից միին էլ այն լինի, վոր նրա բնակչութունը գտնվելիս է չեղել քոչատեղերում: Վերելում (եջ 39) մենք տեսանք, վոր Դարալագյազի սարերում կային միայն 39 գանդեզուրցիները: Մնում է յենթադրել, վոր տվյալներ՝ չկան միմիայն իրեն Չանդեյանի սարերը բարձրացող գանդեզուրցի քոչվորների մասին, բայց վորովհետև մեր մեջ բերած թվերը արդեն գուզադիպում են հրատարակված տվյալներին, այդ յենթադրութունն ևս չոր է ընկ-

\*) № 90 էջ 134:  
\*\*) նույն տեղը էջ 2-ը:

նում և մնում է յենթադրել, վոր յեղել է միմիայն թերհաշվառում:

Կարսի մարզից փոխանցված բոլոր գյուղերի համար էլ պետք է նոր հաշվարկում անել, վորովհետև 1916 թվին այդ շրջանը չի վիճակագրվել:

Թեև 1916 թվին Կարսի մարզը գյուղ վիճակագրության չի յենթարկվել, բայց պաշտոնական հրատարակության մեջ գրված է Կարսի մարզի հաշվարկված բնակչության թիվը, այն է՝ գյուղական վայրերում 359,319 անձ\*): Կովկասյան Որացույցը առ 1-ն հունվարի 1914 թ. Կարսի մարզի գյուղական բնակչութունն հաշվել 342.611 ըն., կամ 5 տոկոսով պակաս: Ուստի և մենք էլ Կարսի մարզից ՀՍՍՀ-ին անցած տերրիտորիայի բնակչութունը 1916 թվի համար բնորոշում ենք 1914 թվին գումարած 5 տոկոս աճում:

Այդպիսով ստանում ենք՝

	1914	1916
1. Ադրբայի շրջանում	15.185	16.000
2. Լեյկնականի »	4.909	5.150
Գումարը	20.094	21.150

Պակասում են նույնպես նաև տվյալներ Բորչալուից անցած շրջանների վերաբերմամբ (Ստեփանավան, Ալլանվերդի): Վորովհետև 1917 թվին ևս կատարվեց գյուղատնտեսական վիճակագրութուն, ուստի և պայմանականորեն կարելի է ընդունել 1917 թվի տվյալներն 1916 թվի համար, նամանավանդ, վոր այդ շրջանների վերաբերմամբ մի տարվա մեջ մեծ փոփոխութուն չեր կարող լինել:

1917 թվի տվյալները մենք վերցնում ենք Վրաստանի Կենտրոնական կոլմից արագրված «Չեզոք գոնալի» գյուղ առ գյուղ ցուցակից, վոր ներկայումս գտնվում է Պետաբլիվում\*\*): 1916 թվի տվյալներից գատելու համար 1917 թվի տվյալների դիմաց գրված են աստղանշաններ:

Չեզոք գոնան 1917-ին ընդգրկում էր Բորչալուից ՀՍՍՀ-ին անցած շրջանները և մի քանի գյուղեր, վորոնք այժմ մնացել են Վրաստանի սահմանի մեջ:

Սակայն այդ ցուցակներում չկային Այրում, Լամբալու, Փոքր Ղարաբլիխա, Սարխար և

\*) № 90 էջ 114:  
\*\*) № 63 աղբյուրը:

Դեմոկրատիկ գյուղերը, վորոնց բնակչութիւնը հաշվարկում ենք:

	Ընդամենը	
1. Ալլահվերդիում	Այրում 400 Լամբալու 600	1.000
2. Ստեփանավանում	Ղարաքիլիսա 500 Փոքր 100 Սարիար 100 Դեմոկրատիկ 100	
	1700	

Ավարտելով ըստ գավառների մեր դիտողութիւններն և հաշվարկումները մեզ մնում է 1916 թվի վերաբերմամբ ևս մի խնդրի վրա կանգ առնել:

1916 թվի տվյալների մեջ չի մտել զորքը: Ըստ Միութենական կենտրինի տվյալների\*) առ 1-ը սեպտեմբերի 1917 թ. Անգրկովկասի 5 նահանգներից զինակոչի էին չնթարկվել 317.500 անձ: Ըստ Ներսիսյանի 1916 թ. հաշվեհամարից մինչ 1917 թ. սեպտեմբերի 1-ը զորքի թիվն ավելացել էր 18 տոկոսով:

վորով և 1916 թվի հաշվեհամարի մոմենտին կային 260.000 զինակոչներ (տես № 93 աղբյուր):

